# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/L-55 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Մեդալը բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և դարձերեսի կողմից ունի հատուկ ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրանալու համար: Կախիչի վերևի մասի երկարությունը 26 մմ է, ներքևի մասինը՝ 46 մմ, իսկ հաստությունը՝ 1 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը՝ կենտրոնից մինչև ներքևի գագաթը՝ վերից վար 50 մմ է: Կախիչը պաստառապատված է 24 մմ լայնություն ունեցող կարմիր գույնի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մետաքսյա ժապավենով: Ժապավենի եզրերն եզերված են 2 մմ լայնություն ունեցող կանաչ գույնի շերտագծով: Ժապավենի կենտրոնով, վերից վար անցնում է 3 մմ լայնություն ունեցող դեղին գույնի երեք շերտագիծ: Մեդալի սկավառակը արծաթափայլ է, պատրաստվում է նեյզիլբերից: Սկավառակի տրամագիծը 32 մմ է, հաստությունը՝ մոտավորապես 3 մմ: Սկավառակի դիմերեսի կենտրոնում պատկերված է սուր և վահան ռելիեֆային ցայտաքանդակ: Վահանի ներքևի մասում, սկավառակի շրջանագծին զուգահեռ պատկերված են կաղնու ճյուղուղեր, իսկ կենտրոնում՝ Հայաստանի Հանրապետության ռելիեֆային ցայտաքանդակը՝ էմալապատված եռագույն էմալով: Սկավառակի հակառակ երեսի կենտրոնական մասում ուռուցիկ տառերով գրվում է՝ ««10 ՏԱՐՎԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»» բառերը: Շրջանագծին զուգահեռ ուռուցիկ տառերով գրվում է ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»» բառերը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Մեդալները պետք է արտադրված լինեն դրոշման ճանապարհով, որը կապահովվի մեդալների բացարձակ միանմանությունը և չափերի նվազագույն շեղումները: Մեդալները դարձերեսի կողմից կրում են արտադրողի անվանանիշը` հետագա կեղծումներց խուսափելու համար |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/L-55 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |